ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 195

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքը (Արենի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Արենի համայնքի (Արենի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝
*ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքը (Արենի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի (Արենի բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 10-008-0184-0094 կադաստրային ծածկագրով 0.58951 հա մակերեսով հողամասից 0,19127 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 10-008-0184-0094 կադաստրային ծածկագրով 0.58951 հա մակերեսով հողամասից 0,19127 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արենի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Արենի բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի (Արենի բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա.Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, « 17 » «հուլիսի» 2023 թ.